ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

«Արարատի» խմբագրութիւնը ցանկանալով ըստ կարողութեան հետաքրքիր դարձնել ամսագիրը և, որքան թերթի ծաւալը ներում է, բաւարար նիւթ տալ ընթերցանութեան համար, դիմում է հայ գրագէտներին և ուսուցիչներին խնդրելով նրանց աշխատակցութիւնը։

«Արարատում» բացի կրօնական—բարոյական յօդուածներից՝ կարևոր տեղ պիտի յատկացուի նաև մանկավարժական, գրական-բանասիրական ու պատմական յօդուածների և ուսումնասիրութիւնների։

Առանձին ուշադրութիւն պիտի դարձուի ոչ միայն մեր և օտար ազգերի եկեղեցական կեանքին, այլ և հայ կեանքին ընդհանրապէս։

Ստացած ամեն գրքի մասին մատենախօսութիւն գրել կը տրուի ձեռնահաս անձերի։

Ցանկալի է, որ ուղարկուած յօդուածները երկար շարունակելի չլինին։

Յօդուածների համար կը տրուի վարձատրութիւն կամ գրամով, կամ յօդուածների արտատպութեամբ «Արարատի» դիրքով։ Վարձատրութեան չափը կամ արտատպած օրինակների թիւը կորոշէ խմբագրութիւնը։ Եթէ յօդուածագրի կողմից որ և է ցանկութիւն չէ յայտնուած վարձատրութեան մասին, յօդուածը չի վարձատրուիլ։ Չեն վարձատրուում նաև վեց երեսից պակաս պատահական յօդուածները, ինչպէս և թղթակցութիւններն ու պատասխանները։

Խմբագրութիւնն ազատ է համարում իրեն՝ յօդուածները կրճատելու, եթէ յօդուածագիրն առաջուց պայման չէ դրել անփոփոխ տպագրելու։

Թարգմանութիւններ ուղարկելիս պէտք է յիշատակել բնագիրը (հեղինակ և լեզու) և, եթէ կարելի է, ուղարկել նաև բնագիրը, որ յետ կը դարձուի ուղարկողին։

Զտպուած փոքր նիւթերը չեն վերադարձւում, իսկ մեծ յօդուածները վերադարձւում են յօդուածագիրների հաշուով։ Զտպուելիք նիւթերի մասին կը յայտնուի «Արարատում»։